

Արձանագրություն թիվ 7

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2021թ ապրիլի 7-ին

Օրակարգը՝

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
4. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 11-ը, ըստ էության խորհրդի կազմի երկու- երրորդը ներկա են, կարող ենք սկսել խորհուրդը:

Նիստի նախագահ, պրոֆ. Ս.Վ.Ղոչիկյան- Ըստ օրակարգի պետք է լսենք ամբիոնների վարիչների հաղորդումը ձեմառային քննական շրջանի վերաբերյալ: Ամբիոնի վարիչները ներկայացնեն իրավիճակն ամբիոններում:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան- Ձմեռային քննաշրջանն ավարտված է և առաջին լուծարքից հետո անբավարար ստացած ուսանող չկա: Ցավոք ուսանողների զգալի մասը ստացել է միջին և միջինից ցածր միավոր:

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի. Մարտիրյան Նման վիճակ է նաև մեր ամբիոնում:

Պրոֆեսոր Ս.Վ.Ղոչիկյան – Քանի որ ամբիոնի վարիչներն արդեն իսկ սկսել են ներկայացնել ամբիոններում քննաշրջանը միանգամից քննարկենք նաև ավարտական աշխատանքների վիճակը:

1. Ֆիզ կոլ. Քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան – Ամբիոնում ավարտական աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Ուսանողների 90 % նորմալ ընթացքով մասնակցում են աշխատանքներին, մի քանիսը աշխատում են, այդ պատճառով որոշակի գրաֆիկով են ներկայանում, սակայն նրանք էլ պատասխանատվությամբ են մոտենում գործին:
2. Օրգանական քիմիայի ամբիոն- Ամբիոնում ավարտական աշխատանք են կատարում Քիմիա բաժնից 2 ուսանող, սննդի անվտանգություն բաժնից 3 ուսանող՝ որոնցից մեկը ամբիոնի վարիչի համաձայնությամբ ավարտական աշխատանքը իրականացնում է անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում: Ֆարմացիայի ինստիտուտի առկա բաժնից 2 ուսանող և 15 ուսանող նույն ինստիտուտի հեռակա բաժնից: Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի բաժնից 4 ուսանող: Աշխատանքները ընթանում են նորմալ ընթացքով:
3. Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան – Մեզ մոտ նույն պես աշխատանքները ընթանում են նորմալ հունով:

Խոսք տանք մեթոդ խորհրդի նախագահին՝ Կ.Ռ. Գրիգորյանին:

Կ.Ռ. Գրիգորյանը նեկայացրեց ըստ կանոնակարգի մեթոդխորհրդի գործունեության ոլորտները: Նա նշեց, որ մեթոդխորհուրդը քննարկում է ամբիոնների կողմից երաշխավորված դասագրքերը, ուսումնամեթոդական ձեռնարկները: Քննարկում դրանց համապատասխանությունը, համապատասխան կրթական մոդուլներին հաստատելուց հետո և նոր դրանից հետո դրանք թույլ տալիս անցնեն գիտ խորհուրդ: Նույն կարգով քննարկվում են նաև ծրագրերը և պրակտիկանները:

Անհրաժեշտ է, որ ծրագրերը համապատասխանեն ներկայացվող պահանջներին: Փոփոխությունները և թարմացվածությունները բերված են մեթոդ խորհրդի կողմից ներկայացված փաթեթում(Փաթեթը ուղարկվել է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին)

Ելույթից հետո Մեթոդ խորհրդի նախագահ Կ.Ռ.Գրիգորյանին ուղղվեցի հարցեր

1, Տիգրան Եզանյան- մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

Մասնագիտության արդի խնդիրներ առարկայի ծրագրում որևէ փոփոխություն կլինի՞, քանզի այն այնքան էլ չի համապատասխանում չափորոշիչներին:

Կ.Ռ.Գրիգորյան – Այդ առարկան 60 ժամ 6 կրեդիտով առարկա է և սպասարկվում է երեք ամբիոններում՝ յուրաքանչյուրը 20 ժամ տևողությամբ: Բավականին սեղմ ժամանակահատվածում ներկայացվում է յուրաքանչյուր ամբիոնի զարգացման փուլերը և հաջողությունները և ժամանակակից ծրագրերը, որոնցով աշխատում են: Տ.Վ.Ղուչիկյան- Ես կառաջարկեմ այդ առարկայի ծրագիրը ուղարկել հետ ամբիոնի վարիչներին, որպեսզի համաձայնեցվի և առարկայի այն բաժինը, որը ավելի խորը ուսումնասիրվում է մագիստրատուրայում վերանայեն և բերեն նորմի:

3. Ընթացիկ հարցերի շարքում ունենք մեկ մագիստրոսական ծրագրի հաստատում: Փաթեթը անհատապես ուղարկվել գիտխորհրդի բոլոր անդամներին: Նրանք ծանոթացել են և արել են որոշակի առաջարկներ, որոնք կրում են տեխնիկական և քերականական բնույթ: Դրանք հաշվի են առնվել և ուղղվել են: Փաթեթը կներկայացնի ք.գ.թ., ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Ս.Գալստյանը:

-Ա.Ս. Գալստյան- Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում ԵՊՀ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՅՏ՝
«Նյութագիտություն»

Ծրագրի իրականացման հիմնավորումը

Ներկայիս քիմիական, ռազմարդյունաբերական, համակարգչային տեխնիկայի, կենսաբժշկական նյութերի արտադրության պահանջները թելադրում են միջազգային չափորոշիչներին համապատասխանող բարձրորակ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը, որոնք ունակ կլինեն աշխատել ինչպես մեծ, միջին ու փոքր արտադրական ձեռնարկություններում, արտադրական տարբեր ոլորտներում, այնպես էլ հետազոտական ակադեմիական և ճյուղային ինստիտուտներում ու համալսարաններում:

Այս առումով շատ մեծ կարևորություն ունի Երևանի պետական համալսարանի Քիմիայի ֆակուլտետում նախատեսվող "Նյութագիտություն" միջոլորտային մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական ծրագրի ներդրումը: Այս մասնագիտացումը մասնավորապես առավել կարևորվում է այն առումով, որ իր մեջ ինտեգրում է բնագիտության բոլոր ճյուղերը՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն: Եվ, բնականաբար, նյութագետ մասնագետը, համարվելով լայն ոլորտի բնագետ, կարող է գործ ունենալ բազմապիսի երևույթների և համակարգերի հետ: Ժամանակակից քիմիական, ռազմարդյունաբերական, համակարգչային տեխնիկայի, կենսաբժշկական նյութերի արտադրություններում պահանջվում են հենց այդպիսի մասնագետներ, որոնք կարող են իրենց կարողությունները ներդնել արտադրության տարատեսակ ոլորտներում՝ համահունչ լինելով գիտությունների ինտեգրման

սրընթաց քայլերին: Հայաստանում քիմիական և տեխնոլոգիական գիտության, կրթության և արտադրության մակարդակը միշտ բարձր է եղել, և այդ տեսակետից խիստ անհրաժեշտություն կա նյութագիտությունը պահել զարգացվածության միջազգային մակարդակի, ապահովելով տնտեսության հարաճուն պահանջները: ՀՀ-ում նյութագիտության միջազգային մակարդակը ապահովելու համար մագիստրոսների պատրաստումը երկու ուսումնական տարվա ընթացքում համալսարանում հնարավոր է, որպեսզի մագիստրանտը ամբողջությամբ տիրապետի նշված ուղղվածությամբ հիմնական գիտելիքներին՝ վերը նշված բնագավառներում աշխատելու ժամանակ լիարժեք իրեն դրսևորելու համար: Հայտը քննարկվել է ֆակուլտետի մեթոդ խորհրդում և այժմ ներկայացվում է գիտխորհրդի քննարկմանը:

Ելույթ ունեցան- Հ.Գ.Խաչատրյանը, Շ.Ա.Մարգարյանը, Կ.Ռ.Գրիգորյանը Ռ.Պ.Մխիթարյանը, Ա.Ի.Ալեքսանյանը: Նրանք նշեցին նման ծրագրի արդիականությունը, և այդ մասնագետների անհրաժեշտությունը աշխատանքային շուկայում:

Որոշեցին - քվեարկության միաձայն արդյունքով հաստատել փաթեթը և դիմել ԵՊՀ գիտխորհրդին հետագա ընթացք տալու համար:

3, Ընթացիկ հարցերից այսօր ունենք ամբիոնի վարիչի ընտրության հարցը: Արդեն տեղյակ եք, որ լրացել է օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյանի պաշտոնավարման ժամկետը: Ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարվել է մրցույթ և մրցույթին մասնակցելու համար դիմել է միայն պրոֆ.Ն.Ա.Դուրգարյանը: Նա ներկայացրել է մրցույթին անհրաժեշտ փաստաթղթերը որոնք քննարկվել են մանդատային, այնուհետև մրցութային հանձնաժողովում երկու դեպքում էլ թեկնածուն երաշխավորվել է մրցույթին մասնակցելու համար: Այժմ հարցը պետք է քննարկվի գիտխորհրդում

Արտահայտվեցին – Նիստի նախագահ, քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը և մրցութային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ի.Լ.Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Նարինե Անժելոյի Դուրգարյանը: Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Նրա թեկնածությունը քննարկվել են ինչպես Օրգանական քիմիայի ամբիոնում,

այնպես էլ մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել է հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Ն.Ա.Դուրգարյանի մասին կարծիք հայտնեցին պրոֆեսորներ Հ.Գ.Խաչատրյանը, Ա.Ի.Մարտիրյանը, Ռ.Պ Մխիթարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ մրցույթի մասնակիցը փորձառու դասախոս և վաստակաշատ գիտնական է, ուսումնական գործընթացի լավ կազմակերպիչ: Արժանի է ընտրվելու Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

Բաց քվեարկությամբ խորհուրդը միաձայն որոշեց մրցույթի մասնակից Ն.Ա.Դուրգարյանին երաշխավորել Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ – Ռ.Պ.Մխիթարյան

Անդամներ- Լ.Ս.Գաբրիելյան, Տ.Եզանյան

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (16-անդամներից ներկա էին 11-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 11 անդամներ: Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար`

Ն.Ա.Դուրգարյանին կողմ քվեարկել են խորհրդի-11 անդամ, դեմ-չկա, անվավեր քվեաթերթ- չկա:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված համարել քիմ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանին:

Քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդի

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդի

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան

